Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 1040 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ՄԱՄՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել «Աղավնավանքի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի շենքը, որի արդյունքում կստեղծվեն հարմարավետ պայմաններ կրթօջախի 43 աշակերտների ուսուցումը կազմակերպելու համար:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ Օգնության Ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ (630 Սեքոնդ Ավենյու, Նյու-Յորք, ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Տավուշի մարզ, գ. Աղավնավանք, 1-ին փող., շենք 53 Բնագավառը՝ կրթություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 175,436 (հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր երեսունվեց) ԱՄՆ դոլարին համարժեք 86,840,820 ՀՀ դրամ

7.	Բարեգործություն ստացողը	«Աղավնավանքի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի 43 աշակերտներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ՝ 2022 թ. հունվարի 3 Ավարտ՝ 2022 թ. օգոստոսի 30
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հիմնանորոգել դպրոցի տանիքը, մարզադահլիճը, հանդիսությունների դահլիճը, սանհանգույցները, ինչպես նաև տեղադրել ջեռուցման համակարգ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 175,436 ԱՄՆ դոլարին համարժեք 86,840,820 ՀՀ դրամ: Իրականացվելիք շինվերանորոգման աշխատանքների մանրամասն ծավալները ներկայացված են պայմանագրին կից հավելվածում: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2022 թ. օգոստոսի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում ակնկալվում է 175,436 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքների ծառայության ձեռքբերում՝ Աղավնավանքի միջնակարգ դպրոցի տանիքը, մարզադահլիճը, հանդիսություն-ների դահլիճը, սանհանգույցները վերանորոգելու և ջեռուցման համակարգ տեղադրելու համար:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ու Տավուշի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

30.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ